Հաղորդակցման միջոցներ «Խնամքի ծառայություններ տնային պայմաններում» (IHSS) ծրագրի՝ կույր և թույլ տեսողություն ունեցող դիմողների և հաճախորդների համար

División de programas para adultos

Հաղորդակցման միջոցներն օգնում են կույր և թույլ տեսողություն ունեցող անձանց տեղեկանալ ծրագրի մասին: Ծրագրի դիմողներին և հաճախորդներին այլընտրանքային եղանակով հասանելի են հետևյալ տպագիր տեղեկությունները

- **18 տառաչափով** ժամանակացույցներ, Գործողությունների ծանուցագրեր և IHSS ծրագրի պահանջվող ձևաթղթեր թույլ տեսողությամբ մարդկանց համար:
- **Աուդիո և տեքստային ֆայլերի (CD)** ձևաչափով ժամանակացույցներ, Գործողությունների ծանուցագրեր և IHSS ծրագրի պահանջվող ձևաթղթեր կույր և թույլ տեսողությամբ մարդկանց համար:
- **Բրայլյան այբուբենով** Գործողությունների ծանուցագրեր և IHSS ծրագրի պահանջվող ձևաթղթեր կույր մարդկանց համար:
- **Ժամանակացույցների հեռախոսային համակարգ (TTS)**, որը հասանելի է կույր մարդկանց՝ IHSS-ի մատակարարների ժամանակացույցները հեռախոսով հաստատելու կամ մերժելու համար առանց ստորագրելու անհրաժեշտության: **TTS**-ն ըստ պահանջի կարող է նաև տրամադրվել թույլ տեսողություն ունեցող անձանց, որոնք չեն կարող կարդալ և հաստատել մեծ տառաչափերով տպագիր ժամանակացույցներ:

CDSS
CALIFORNIA DEPARTMENT OF SOCIAL SERVICES

Դիմեք ձեր վարչական շրջանի IHSS-ի ներկայացուցչին կամ սոցիալական աշխատողին՝ իմանալու, թե ինչպես կարող եք ստանալ հաղորդակցման անհրաժեշտ միջոցը՝ IHSS-ի ծրագրին ծանոթանալու համար: